# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2017թ. N 80-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ
24-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 24-ի նիստի հետևյալ ***օ ր ա կ ա ր գ ը.***

1.1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող, համայնքին սոցիալական ծառայություններ տրամադրող ստորաբաժանումների կողմից զբաղեցրած տարածքը և դրան հարող հողամասը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.2. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան*

1.3.Համայնքի կարիքների համար գույք ձեռք բերելու համաձայնություն տալու մասին

*զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի բացակա | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի բացակա | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի բացակա | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......7...... դեմ-......0..... ձեռնպահ- ..0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 նոյեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբեր 2017թ. N 81-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշման 38-41-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի նիստի «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ շենքերի (տարածքների), այդ թվում՝ միասնական ընդունարանների տեղակայման առաջարկվող վայրերին և պայմաններին հավանություն տալու մասին» N 29 արձանագրային որոշումը և ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի՝ ս/թ նոյեմբերի 13-ի N 02/14.9/24869-17 գրությամբ ներկայացված առաջարկությունը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2017 թվականի հունիսի 20-ի 20062017-10-0011 սեփականության վկայական) Ձախափնյակ թաղամասի 2-րդ փողոցի N 3 հասցեում գտնվող մանկապարտեզի մասնաշենքի 1-ին հարկի՝ համայնքին սոցիալական ծառայություններ տրամադրող ստորաբաժանումների կողմից զբաղեցրած 144 քմ մակերսով տարածքը և դրան հարող հողատարածքից 200 քմ մակերեսով հողամասը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն կազմակերպելու և նշված հողամասում ընդունարան կառուցելու նպատակով:

2. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածին համապատասխան սույն որոշման ընդունման պահից չեղյալ ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 12-ի «Ջերմուկի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Ձախափնյակի N 27/5 հասցեում գտնվող հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» N 10-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | բացակա | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | բացակա | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է ՝ կողմ- ....7....... դեմ-....0....... ձեռնպահ- ..0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 նոյեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2017թ. N 82-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ,ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը, մեկնարկային գինը և նախատեսված օբյեկտի կառուցման ժամկետը՝ համաձայն սույն որոշման հավելվածով ներկայացված աղյուսակի:

2. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածին համապատասխան սույն որոշման ընդունման պահից չեղյալ ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 21-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, վարձավճարի մեկնարկային գինը և վարձակալման պայմանները հաստատելու մասին» N 62-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | բացակա | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | *(ստորագրություն)* | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | *(ստորագրություն)* | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | *(ստորագրություն)* | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | *(ստորագրություն)* | | |
| Սարգսյան Համլիկ Ժորայի | *(ստորագրություն)* | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | *(ստորագրություն)* | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | *(ստորագրություն)* | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7....... դեմ-....0....... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 նոյեմբերի 24
Ջերմուկ

*Հավելված*

*Ջերմուկ համայնքի ավագանու*
*2017 թվականի նոյեմբերի 24-ի*
*N 82-Ա որոշման*

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՕՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿԸ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| **հողամասի օտարման նպատակը** | **հողամասի հասցեն** | **Մակեր-եսը, հա** | **մեկնարկային գինը, դրամ** | **հողամասի ծածկագիրը** | **նպատակային նշանակությունը** | **գործառնական նշանակություն ը (հողատեսքը)** |
|---|---|---|---|---|---|---|
| Գյուղատնտեսական գործունեության համար | գ. Գնդեվազ | 0,685 | 45 000 | 10-016-0221-0009 | գյուղատնտեսական | արոտավայր |
| Գյուղատնտեսական գործունեության համար | գ. Գնդեվազ | 0,07825 | 10 000 | 10-016-0218-0068 | գյուղատնտեսական | արոտավայր |
| Գյուղատնտեսական գործունեության համար | գ. Գնդեվազ | 1,314 | 82 500 | 10-016-0230-0108 | գյուղատնտեսական | արոտավայր |
| Գյուղատնտեսական գործունեության համար | գ. Գնդեվազ | 4,07578 | 226 500 | 10-016-0201-0125 | գյուղատնտեսական | արոտավայր |
| Գյուղատնտեսական գործունեության համար | Ք. Ջերմուկ | 0,2 | 450 000 | 10-002-0106-0004 | գյուղատնտեսական | այլ հողատեսք |
| Հասարակական կառուցապատման համար | Ք. Ջերմուկ, Ջիվանու փողոց, 1-ին փակուղի N 1 | 0,0046 | 58 000 | 10-002-0011-0027 | բնակավայրերի | Հասարակական կառուցապատման |
| Բնակելի կառուցապատման համար | Ք. Ջերմուկ, Ձախափնյակի 6-րդ փողոց N 4 | 0,012 | 100 000 | 10-002-0032-0077 | բնակավայրերի | Բնակելի կառուցապատման |
| Հասարակական կառուցապատման համար | Ք. Ջերմուկ, Ձախափնյակի 6-րդ փողոց N 8 | 0,0024 | 24 000 | 10-002-0034-0075 | բնակավայրերի | հասարակական կառուցապատման |
| Հասարակական կառուցապատման համար | Ք. Ջերմուկ, Ձախափնյակի 6-րդ փողոց N 10 | 0,0024 | 24 000 | 10-002-0034-0076 | բնակավայրերի | հասարակական կառուցապատման |
| Բնակելի կառուցապատման համար | Ք. Ջերմուկ, Ձախափնյակի 5-րդ փակուղի N 11 | 0,0024 | 24 000 | 10-002-0026-0149 | բնակավայրերի | Բնակելի կառուցապատման |
| Բնակելի կառուցապատման համար | Ք. Ջերմուկ, Ձախափնյակ N 14/16 | 0,0024 | 24 000 | 10-002-0031-0194 | բնակավայրերի | Բնակելի կառուցապատման |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ասարակական կառուցապատման համար | Ձախափնյակի 2-րդ փողոց N 3/1 | 0,01 | 100 000 | 10-002-0029-0088 | բնակավայրերի | հասարակական կառուցապատման |
| Հանգստի գոտու ստեղծման համար | Ք. Ջերմուկ, Գետափնյա փողոց N 14 | 0,056 | 700 000 | 10-002-0588-0004 | հատուկ պահպանվող տարածքների | հանգստի համար նախատեսված |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2017թ. N 83-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Տարածքային զարգացման հիմնադրամի ներդրումային ծրագրի շրջանակներում ձեռք բերվելիք մեքենամեխանիզմները կայանելու նպատակով անշարժ գույք՝ ավտոկայանատեղի, ձեռք բերելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | բացակա | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համլիկ Ժորայի | բացակա | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7........ դեմ-.....0...... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 նոյեմբերի 24
Ջերմուկ